ՍԷՐԸ

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Եթէ, բարեկամ, քո անդորը հոգուն
Տիրում է յանկարծ մի անյայտ կսկիծ,
Եթէ ինչ որ հուր քո ողջ գոյութիւն
Այրում է ուժգին և զգացմունքից
Սիրտդ անհանգիստ բաբախում է միշտ,
Եթէ քուն չ'ունիս և օր ու գիշեր
Բորբոքում է քեզ մի հեշտալիր վիշտ,—
Այդ հոգու մրրիկ-կոչում ենք մենք սէր։

Եթէ բարեկամ, այդ հուրն անշէջ
Մուռնալ է տալիս բոլոր ա՛յլ վշտեր,
Եթէ արթնութեան թէ երազի մէջ
Աչքիդ առաջն է նազելի պատկեր,
Եթէ կաթոգին, սիրավառ համբոյր
Ձերմ դրոշմում ես կոյսի շրթունքին—
Վայելում անվերջ կեանքի ողջ հրապոյր,—
Այդ զգացմունքը-սէրն է ջերմագին։

Եթէ, բարեկամ, այս ամեն յուզմունք
Տեսնում ես սրտումդ հետզհետ մարում,
Եթէ վշտահար թափում ես արցունք
Բաղդ, ճակատագիր ողբում, անիծում,
Եթէ թախծալի քո տխուր գէմքին
Չէ խաղում նախկին այն անոյշ ժպիտ,
Եթէ հոգուդ մէջ դատարկ է, մթին—
Աւա՜ղ խաբուած է սէրը ճշմարիտ։

1890 թ., Յունիսի 5. Թիֆլիս։